

# ԽԱՂ

(Պատկերներ գիտից)

## I

Գիւղի այդ ծայրում, վերջին տներից և ծառաստաններից յետոյ, խճուղու եղբիցն սկսած, գոգաձև բարձրանում է մի ծործոր, որ օրուայ մեծ մասը գրեթէ ստուերի մէջ է թէ ետևի և թէ երկու կողերի բլուրների շնորհիւ:

Ստուեր ձգող այդ շրթունքների առապարներից ցած, ամբողջ տարածութիւնը բռնել է մի ծաղկալից մարգագետին, որ մշտապէս օրօրուում է փչող սիւքից և գնալով աւելի դալարագեղ դառնում վտակների ափերին:

Բծաւորուած սպիտակ վարդենիների և հեռուից խոշոր, մենաւորիկ ժայռերի նմանող մասուլիսի թուփերով —համանում էր նա մինչև փրփրոտ գետակը, ոստնում վրայից և միրճուելու գնում հօրիզոնի վրայ ճապաղուած անտառի կուրծքը:

Այդ տեսակ ծործորներով է շերտաւորուած գիւղի ամբողջ թիկունքը՝ Սարշէնից սկսած մինչև գիւղաքաղաք:

Ամենալաւ արօտատեղիներ լինելով, լեռնալանջի այդ կողերի վրայ միշտ կարելի է տեսնել արածող ցանուցըիւ նախիրներ, այլև խոտերի մէջ վազվզող կամ միացած ու թիկն տուած խօսակցելիս՝ գիւղացի մանուկներ, որոնք տաւարը հսկելու են դալիս և ստուերալից կողերի վրայ հաւաքւում:

Հոկտեմբեր, 1905.

Յուլիսի այդ օրերին, Դուզանի լեռնադաշտի նման ծաղկալից անկիւն դժուար է երևակայել:—

Հարիւրաւոր գոյնզգոյն շերտեր բծաւորում են անծայր հարթավայրը: Այստեղ՝ պլուտոն է մի ամբողջ տարածութիւն արեան պէս ներկել, այնտեղ՝ նուրբ ու քնքոյշ սպիտակ խնձորածաղիկը արշալոյսի կարմրորակ լոյսով կարծես ողողել բլուրների կուրծքը, քիչ հեռու ինչ որ ծաղիկների խումբ, լուրջ գոյնով երկնքի մի կտոր հանգչեցրել արտի վրայ, նրա մօտը, մանիշակագոյն քմահաճ ուղրուուն երիզներ գծել իսիարումնը, գաղջ փոսիկներին ու կանաչ ակօսների նմանող խորութիւններին թաւշեայ օձիք են կազմել ջուղածաղիկները և գաճաճ վիշապումների միջից զլուկ դուրս պարզել՝ ցնցւում են դեղնորակ խոշոր ծաղիկներով շուշանները, այլ և թասաճեւ և խոշոր պսակներով ջոխսածաղիկները...

Սիրում էի ամեն առաւօտ լուսածագին գնալ այդ կողմերը, մտնել նախ Սարշէն, որ միայն մի վերսատ հեռու էր մեր գիւղից, յետոյ զբօսանքի քայլերով վերադառնում էի և յաճախ, լեռնալանջի կողերից մէկի վրայ ընկողմանած, կամ նրանց փոսութեան դալարիների մէջ մեկնուած՝ մնում էի երազկոտ ժամեր անցկացնելու, ակնարկս դիմացի ցցուն զագաթներին և լոյժ մանիշակագոյն մշուշի մէջ թաղուած անտառներին:

Այդ օր սակայն—մի արևալից և լաւ օր—շատ հեռու չը գնացի: Խճուղուց վեր ելայ, մինչև ծնկներս խոտերի մէջ՝ առաջ քայլեցի և մտածեցի դիմացս երեցող առաջին թփիկի տակ նստել:

Մամուխի մացառ էր այդ, բաւական խոշոր, տարածուած և ծաղկած: Շրջապատում խոտերը կոխսոտուած — ջարդուած էին. աջ կողմում նոյն իսկ լարծուն էր դարձել դէպի կչկչացող, երկու թզաչափ վտակն իջնող՝ զառիվայրը:

Թփին չհասած, նկատեցի սագերի երամներ, որոնք օրօրուն, սպիտակ ամպերի շարժուն քուլաների նման՝ սահում էին խոտերի մէջ:

Յետոյ աչքիս խփեցին մի քանի սև, թաւոտ զլուխ-ներ և բանից դուրս եկաւ, որ տաւարարածների մի փոքրիկ խումբ, ինձնից առաջ զրաւել էր թէ թուփը և թէ նրա շրջապատը:

Կարմիր ու դեղին հագուստներով փոքրիկ աղջիկ-ներ էլ երևացին. միմեանց մօտ շարքին կանգնած՝ երկար ճիպուններ ձեռքերին:

Մօտենալով, համրեցի. 7—8 տղայ էին, 4—5 աղջիկ: Ըստ երևոյթին, ամբողջ լեռնալանջի վրայ գանուղներն էին, որ տաւարներին թողել հասնելու մինչև բլուրների ծայրերը, իրենք միմեանց ձայն էին տուել և մամուկսի թփի մօտ, սագարած աղջիկների շուրջը ժողովուել:

Այդպէս էլ էր. աղջիկները ինձ տեսնելիս՝ կանգնել էին, իսկ տղաներից մէկը երեսի վրայ փոռուել, միւսը կկզած, մի քանին էլ մամիսի ետեղ կանգնած՝ դիտում էին գնալս: Երկուան էլ քարակոյտեր կազմել, աթոռ էին դարձել ու վրան հեծել:

—Բարեւ, տղայք, կանչեցի հեռուից:

Մէկը, որ ամենից առաջ էր նստել, դարձաւ միւսներին ու ձայնեց.

—Պ. Երուանդն ա ըլել, տօ... ես էլ ասի թէ էս քաղքցին ով ա, որ գալիս ա դէսը...

—Եկել ես ման գալու. հարցրեց քարակոյտի վրայ նստողներից մէկը:

—Համեցէք. արեց մի երրորդը—ըսէնց լաւ տեղ սկի չես գտնիլ...

—Իսկ դժուք ինչու էք հաւաքուել այստեղ. հարցրի ես մօտ գնալով:

—Հրէն այ... արեց մէկը և ձեռքի փայտը դէպի վեր պարզեց—էն տաւարները մերն ա... արածացնում ենք:

—Հազըր ասես սինծ ենք ուտում. ծիծաղեց պառկողը և առաջը կիտուած խոտերի փնջերեցը պոկեց ու սկսեց ծամել:

**Մօտեցել էի բոլորովին։ Ամենքը ժպառուն ինձ նայեցին և ստեղ տուին։**

Ծիծաղելի տեսք ունէին բոլորն էլ։ Հագել էին պատառոտուն, տասը տեղից կարկտաններով լեցուն, ամէն կողմից ծուէններ կախուած արխալուղ. վարտիկի փոխարէն՝ ինչ որ աղտոտ կարճ կտաւ մինչև ծկները, ոտերնին աղմուտ, բորիկ. զվանին կարտուզ էր կամ փափախ, սակայն որպիսի կարտուզ և ինչ օրի ընկած փափախ... իւղոտ, ճարտկուած, ճաթրտած ու կոտրտած, կէսը ընկած, միւս կէսը ցնցոտի դարձած կարտուզ, բուրդը զզզզուած, կէսիցը կարծես տապարած և աղտի մէջ թաթախած փափախ, որոնք ով գիտէ ինչ աղպանոցից էին գուել—հանել...

**Հնայելով հագուստներին, ձեռք-երեսի, ոտների և բաց կուրծքերի աղտին, ամենքն էլ ժպառուն ու զուարթիսկոյն՝ զանազան զիրքեր բռնեցին շուրջ։**

**Մէկը կկզեց և մոռութը զբաւ ծնկների վրայ. երկրորդը փռուեց երեսի վրայ՝ դէմքը դէպի ինձ, երրորդը մամիսի թփի մէջ մտաւ և սմքուեց այստեղ, չորրորդը կողքի վրայ ընկողմաննեց... ու ամէնքն էլ շարունակեցին ծամել ու ծամծմոտել սինձը, որոնցից փունջ—փունջ ունէին ձեռքներին կամ թևերի տակ կոխած։**

**Ատամները սևացել բոյսից, շրթունքները սպիտակել, դէմքերը արևակէղ, մազերնին թափթփած, առատ ու թաւ, աչքերնին պսպղուն, մնդիկի պէս շարժուն չարաճները, երբ ես էլ նստել էի, միմեանց նայեցին, քթթեցին, լուռ ծիծաղեցին, յետոյ թփի մէջ կծկուածը կանչեց յանկարծ։**

—Աղա, բա ամօթ չի. ընչի՞ պ. Երուանդին էլ սինձ չէք թաւազա (1) անում... Համեցէք, սինձ կեր...

—Համեցէք... արին ամէնքը և առջևս նետեցին մի մի փունջ։

<sup>1)</sup>) Մատուցանել

—Էս որտեղից էք քաղել, շատ կայ այս կողմերում:

—Շատ... արեց քարակոյտի վրայ նստողը—հրէն ողջը սինձ չի... ամա ծաղկել ա հմի... գլխի կողմիցը որ ուտես, հլա դալար ա...

—Էս աղջիկներն ինչ գործ ունին ըստեղ. հարցըի ես նստելով—սրանք էլ են տաւար արածացնում:

—Չէ. խօսեց նորից նոյն մանուկը—սրանք դաղեր (2) են բերել... դէ, մենք էլ ասինք՝ գանք քիչ հետները խօսանք... ըսէնց չի, ա խալխը...

Ու այնպէս ծաղրածու կերպարանք ստացաւ և աչքը քթթեց, որ բոլորն էլ ծիծաղեցին:

—Համ էլ, վրայ տուաւ նա հեղնական ակնարկներ անելով սրան-նրան—մեր նշանածնին են սրանք... Այ, էն թագուշը իմ նշանածն ա...

—Վոյ, սատկես դու հա... չանչեց (3) դէպի նա աղջիկներից մէկը—սուտ ընչի ես ասում...

Սյնքան տարօրինակ մանուկ էր խօսող տղան, որ առանձնապէս զննեցի նրան, մինչ խօսում էր և ծամածութիւններ անում:

Գրէթէ կիսամերկ էր, կարմիր կտաւէ հին ու կտրտուած շապիկ, նոյնքան կտրտուած ու մինչև ծընկները հասնող վարդիկի հետ: Գլխին մի կարտուզ ունէր, որ կասես շան բերանը տուած ու ծամած լինէր. ծուռ կոխել մինչև ականջները, մնձից սեացած ատամները բաց, դէմքը արկից կիզուած ու թեփոտած, մազերն էլ շէկ:

Խօսելիս մէկ ինձ էր դառնում, մէկ էլ ծաղրածու կերպով սրան-նրան ակնարկներ անում և քրքիջների առիթ տուող ծամածութիւններ կազմում այլանդակ դէմքի վրայ:

—Անունդ ինչ է. հարցըի միջահատելով նրան:

2) Սագեր.

3) Զեռքը տափակ՝ դէպի ուրիշը ցցել իբր նախատինք.

—Տեղօ ա.

—Դրա ի՞նչ տեսակ անուն է որ...

—Տեղամաք ա. մէջ մտաւ երեսի վրայ փռուածը—  
մենք Տեղօ ենք ասում:

—Ադա ուր ես մէջ ընկնում, լպսուած, կանչեց  
նրա վրայ Տեղօն—քեզ ա խօսացնում, թէ ինձ... ընչի,  
ես գիդամ ոչ, որ տէրտէրը ինձ Տեղեմաք ա կնքել:

—Տեղեմաք, արի ես—որտեղից է գտել հայրդ այդ  
անունը:

—Հէրս ընչի. լայն ծիծաղեց Տեղօն և ատամները  
ցցեց—տէրտէրն ա գտել. մէկ դափթար ունի, ընդի  
կարդում ա ու երեխեքանցը անուն դնում... Այ, էս  
գորտի անունը (ցոյց տուաւ առջևո փռուածին) Արտա-  
շէս ա դրել, մենք Արտօ ենք կանչում:

—Նրա անունն էլ Անքանազ ա—մէջ մտաւ մի  
երրորդ մանուկ և թփի մէջ սմբուածին ցոյց տուաւ—  
ամա մենք Քանազ ենք ասում:

—Ադա էլի՛ մէջ մտաք. ճչաց նրա վրայ Տեղօն—  
տօ սա ձեզ ա խօսացնում, ես ինձ... Ուզում ես վեր  
կենամ ու ջնջիւմ... ինչ ըէհայա (¹) խալիս էք, տօ...  
չա (դարձաւ նա դէպի ինձ) այ, էն—մէկէլի անունը  
Արտազ ա դրել, մենք Տաղի ենք կանչում... Ադա, Տա-  
ղի՛, ըսեխոդ ցոյց տու մէկ, ուր ես տաւարի պէս պլու-  
խըդ խոտերի միջին խրել:

Մինչ այդ, աղջիկները նստեցին և իրար կպած ու  
լուռ՝ ինձ էին զննում, միմեանց հետ երբեմն էլ փս-  
փսում, ամաշելով ծիծաղում:

Չորս էին, թէ հինգ. տասնից՝ տասներկու տարե-  
կան կը լինէին. սև, աղտոտ, ոտարբորիկ և տգեղ. Մէկն  
էր միայն քիչ սիրուն, կապոյտ գգուող աշքերով և ան-  
մեղ մանկական ժպիտ միշտ դէմքին. Նա էլ այնքան  
սինձ էր ծամել, որ ամբողջ բերանը սեացել էր, ինքն  
էլ ձեռք ու ոտքով ցեխաթաթախ ու մրոտ դարձել:

¹) Անամօթ.

Պարզ և հնամաշ կտաւէ շրջազգեստներ ունէին.  
Պլուխնին ինչ որ չթի նմանող թաշկինակի մէջ էր փա-  
թաթած, սակայն բոլորի մազերն փոշուց թէ ցեխից՝  
բըդի նման կոշտացել-միմեանց էին կպեր. Ամէնքի ձեռ-  
քը մի մի ճիպոտ կար, թևերի տակն էլ ուտելու բան-  
ջարեղէն—սինձ, շուշան, թրժնջուկ կամ քեղ:

Տաղին, որին Տելօն այնքան կոշտութեամբ հրաւի-  
րել էր մոռութիւն ինձ ցոյց տալու, կամաց բարձրացրեց  
զլուխը, նայեց մեր կողմը, յետոյ փոթկացրեց և նորից  
մտաւ խոտերի մէջ:

—Սա իօ մեր Բաղրամի որդին է. ճանաչեցի  
նրան:

—Հա, քիւրդ-Բաղրամի տղան ա. ասաց Տելօն ծաղ-  
րալից շեշտով—հէնց հօրը պէս էլ ընէնց ճչում ա, որ  
կասես աքլար ըլի... կու-կու-րի կռւռւ... ինչ ա ըլ-  
ել, այ Տաղի... Սկի, եա կանչում ա թէ եկէք, մնձի  
տեղ եմ գտել, եա թէ չէ մի հատ շուշան ա քաղել...  
Այ ոչ-փուչ ըլես դու, Տաղի, հլա մէկ խօսա...

—Աղա դէ հերիք ա է է... ճշաց Տաղին զլուխը  
բարձրացնելով—դռւ ինչ ես, դռւ... խողի պէս՝ խըմ-  
իւմ-խըմ... թէ ինչ ա, քիթն ա վեր քաշում ստար-  
շինի պէս... փռւհ...

—Չասի՞, չասի՞, ա խալիս. բարձր ու հնչեղ քըր-  
քջաց Տելօն—տեսնաք, տեսնաք ոնց հօրը նման աքլարի  
պէս ճշում ա...

Ապա վիզը ցցեց դէպի զայրացած Տաղին, ձեռքի  
սինձը ցած թողեց, թևերը թափահարեց, ազդրերին  
խփեց ու աքաղաղի ձայնով ճշաց.

—Կու-կու-լի-կռւ ռւ...

Բոլորը քրքջացին. յիրաւի շատ ծիծաղելի էր այդ  
միջոցին Տելօի դէմքը, որ երկարացել, ծաղրաշարժ  
գծեր էր կազմել:

—Խնաքնտ, խնաքնտ... աղաղակեց դէպինա Տաղին:

—Փռւ... արեց Արտօն—բա ամօթ չի, տօ ինչ էք  
փիս շների պէս իրար զզզզում:

—Դու ինչ ես, դու. դարձաւ դէպի նա Տելօն—  
ոզնի, քոլի՛ ոզնի...

—Ոզնի էլ ես, հլա խոզ էլ հետը...

Մտածեցի միջամտել, սակայն Քանազը դարձաւ դէպի աղջիկներն ու կանչեց.

—Աղա Թագնւշ, աղչի բա չէք տեսնում, դադերը ձորն են թափւում է է...

Աղջիկները ցնցուեցին, ոտքի թռան ու փայտերը բարձրացրած՝ վազեցին դէպի սագերը, որոնք կչկչալով ու խմբովին, գլուխնին ցցած՝ դիմում էին դէպի ձորակը:

—Ա՛ զազը, էդ ուր էք գնում. ձշում էր մի աղջիկ  
—ու ձեզ չեմ ասում... ա զազը, զազը...

—Ծարաւ են հալբաթ. զիտեց Տելօն:

Եւ բոլոր մանուկները դարձան դէպի վազող աղջիկներն ու լուռ՝ հետևում էին նրանց հետապնդումներին:

Մի քանի ըստէ սարալանջի վրայ միմիայն սագերի կչկչոցն ու թևերի թափահարումներ լսուեցին, յետոյ աղջիկների կանչերը, որոնք իջնում էին դէպի ձորը՝ փախչող թռչունների հետ...

## II

Այդ միջոցին էր, որ խճուղու վրայ երևաց փոշումի թեթև պտոյտ, մղուած Սարշէնի կողմի քամուց: Յետոյ, միմեանց ետևից յայտնուեցին 4-5 արագավաղ ձիւողներ:

Առաջին արշաւողը աջ ձեռքով փայտը ծնկների վրայ ցցած, չերքեղկայով երկարահասակ անձ էր: Ծանօթ դէմք էր թւում, բայց հեռու լինելով՝ ճանաչել չկարողացայ: Կողքիցը քայլում էր սև չերքեղկայ հաղած, կիսափափախով մի նիհար ձիաւոր, որ մտրակն էր շարժում անընդհատ և խօսակցում առաջինի հետ: Նրանց ետևից գնում էր կուզ, կարտուղով ու լիքը դէմքով անձ, իսկ ամենից յետոյ էլ երկու ուրիշները, որոնցից

մէկը շրջանական ոստիկան զինուոր էր երևում՝ հրացանը մէջքին, նշանազգեստով և երկար սուրը կողքից:

—Հլա... կանչեց Տելօն—ընդի՛ մտիկ տուեք, տղերք, ստարշինան, սուրդիա Մուկուչը, էն մէկն էլ պիսերն ա... հլա ստրաժնիկ<sup>(1)</sup> էլ հետները... էն հոր են գնում ըտէնց քշելէն:

—Ստրաժնիկի հետինն ով ա, ոո... ասեց թանապը չողած— կասես քչքչան-նիկօն ըլի:

—Նա ա որ կայ. պնդեց Արտօն ու թփի միջից գուշը դուրս պարզեց—Այ տղայ, տենաս էտ բնչ ա ըլել:

—Ի՞նչ պիտի ըլի. ձայնեց պառկած մանուկներից մէկը—գընում են գեղը վառեն...

—Երէկ իրիգուն Մելիքենց տան առաջ քեօխվէն, գզիրը, Մելիքն ու Ռաքէլը կուչտորում էին... բեալքի ընդի են գնում:

—Զէ. արեց Տելօն—ընդի չի ըլի. էն կոփւը ջաղցի քարի վրայ էր. համ էլ բարըշեցին՝ պրծան:

—Բեալքի քչքչան նիկօն ա տանում դրանց... էն օր քարքըցին ու նիկօլը քիչ մնաց իրար ծեծէին. խօսեց Տաղին—ես տեսայ. քաղքցու կնիկը ջուր էր շուռ տուել նիկօլի օջախի մէջն ու կրակը հանգըրել. նիկօլի ճղճան կնիկն էլ մէկ ուշունց էր տալիս, մէկ ուշունց... քաղքցին էլասա որ կասես. շիլ Գայուշին ցեխը կոխեց ու հանեց...

Տաղիի պատմածը իմ ծերունի ընկերոջ կոփւն էր, որ տեղի էր ունեցել երկու օր առաջ, մեծ չափեր էր ընդունել և քչքչան նիկօլի գնչուական ճիշերը ամբողջ օր զուարճացըրել էր գիւղին:

—Կըլի որ էդ ըլի. նկատեց Արտօն—քչքչան նիկօլը կոռւի ա հէնց բանդ. կնիկն էլ, ույ, ույ, ույ... մէկ դարաշին ա, մէկ ուշունցի հասրաթ... Որ աչքը,

1) Պահակ զինուոր.

Էս շիլ աչքը չի ծոռւմ ու բերանը փրփրոտացնում—  
կասես ջադու ըլի:

—Դուք սկի՞ բան չէք հասկանում, տօ, ձայնեց  
Տելօն—ընը, կը տենաք. Էդ Աստծու պատիժները գե-  
ղըն են գնում ուրիշ բանի համար: Տենաս էլի ի՞նչ զու-  
լում են մտածել գեղը կրակ տալու... Եասանլը ուր  
են տանում բաս... Հլա պիսերը, սուղիան... փու ես  
քու կաշի կտրած տրեխ երեսիդ ի՞նչ ասեմ, սուղիա  
Մուկուչ. Էս դիսի քնն բաները կըլի... կը տենաք. նա ա,  
որ օձի պէս ըստի-ընդի բան ա սարքում, որ ի՞նչ ա՝  
ոսկոր հանի միջիցն... Տղերք, հլա մէկ իմ տաւարին  
աչքը ածէք՝ ես գնամ գեղը տենամ ի՞նչ կայ...

—Տօ մի գնա մի՞... արեց Տաղին—հէրդ մէկ ընէնց  
պիսիդ կը տայ, որ կարտուզը էսհէդ մինչև բերանդ կը  
մտնի...

Տելօն, որ պատրաստում էր գիւղն իջնելու,  
կանգ առաւ և սկսեց ծոծրակիլ քորել: Բատ երեսյթին,  
Տաղիի խօսքերի դառն ճշմարտութիւնը կասեցրեց  
նրան:

Քանազը ժալտելով նրան նայեց ու յանկարծ ձայ-  
նեց.

—Եանի էլ ուր ես գնում, չես իմանում թէ ալան  
—թալանը ոնց ա ըլում. ինքդ եանի քի՞չ ես քեօխվա  
ըլել...

—Հա տօ, արեց Արտօն—եկէք խաղանք էլի...

Մանուկները զուարթ ծիծաղով միմեանց նայեցին.  
պառկողները ելան—նստեցին, Արտօն մամուխի թիկիցը  
դուրս եկաւ և մինչ աղջիկները սազերին ետ դարձրած՝  
մօտենում էին, սարալանջի վրայ սկսեց կազմուել ման-  
կական մի հետաքրքիր խաղ:

Անմիջապէս Տելօն մոռացաւ գիւղը, ուղղուեց ու  
կանչեց.

—Ես ստարշինա...

—Էնչի՞, տօ, գոչեց Քանազը—հէնց ամեն վախտ

դու ես ստարշինա ըլելու... Զենք ուզում, դու փիս ես  
ծեծում... ընէնց չի, տղերք...

—Հա. Էսհէդ թող ես ըլեմ ստարշինա. ասաց  
Տաղին:

—Աղա դէ ձէններդ կարէք է է... ճչաց Տելօն—  
ես ձեր քեօխվան չեմ ըլել մինչի օրս, հ՞ը...

—Հա, յետոյ:

—Յետոյ էլ էն, որ էսօր էլ քեօխվութէնից ստար-  
շինա եմ ըլում... կուզենամ, հլա պրիստաւ էլ կ'ըլեմ.  
Իմ ձեռքին չի:

—Փիէ... արեց Արտօն—ստարշինան եանի քի՞չ ա  
ծեծում, որ հմի էլ ուզում ես պրիստաւ (¹) կարես  
պիններիս... չէ, ախպէր, որ ըսէնց ա՝ ես չեմ խաղում:

—Ա՛ խալիսը, ձայնեց յանկարծ Տելօն ու սպառնա-  
լից՝ ոստնեց կանգնեց, խլեց գետնի վրայից իր ճիպոտը,  
կարտուզը պինդ կոխեց գիսին ու սրան-նրան նայեց—  
ինձ պրիստաւ չէք ուզում, ա խալիսը,..

Միանդաման սարսափելի էր փոքրիկ բռնաւորը իր  
դուրս ցցած կրծքով, կատաղի հայեացքովն ու բերնի  
երկու շարք սեացած, գազանային ակռաներովը:

Երկի բոլորն էլ վախեցան: Աղջիկները, որ մօտե-  
ցել էին, միմեանց կպան:

—Վայ... արեց մէկը—կասես գէլ ըլի:

—Տօ գել էլ եմ ու արջ էլ. գոռաց Տելօն—բա  
ընչացնւ քեօխվա եմ, ստարշինա, եա պրիստաւ... Զեր  
հէրը կանիծեմ, թէ ինձ նաշալնիկ (²) չէք արել...  
ընէնց օյին դնեմ գիններիդ որ... կը թողամ սկի որ  
խաղաք...

Քանազն ու Տաղին ինձ նայեցին, կարծես օգնու-  
խին խնդրելով:

—Դա ինչ է, Տելօ, միջամտեցի ես—դու բռնաւոր

¹) Ոստիկանապետ գաւառամասի.

²) Գաւառապետ.

իսօ չեմս: Թող ընտրեն, էլի. թէ քեզ ընտրեցին՝ կուզես  
թագաւոր եղիր:

— Ընչի՞ թագաւոր. ճշաց Տելօն—ես ամէն վախտ  
էն ա քեօխվա եա ստարշինա եմ ըլել, ծեծոտել եմ, ու-  
շունց տուել, ոսկոռ կերել, սրան պատժել, նրան հուալ-  
տուել... ուզում ես որ հմի մէկ ուրիշը ինձ ըտէնց  
անի... Զէ. թէ պրիստաւ ա՛ ես եմ, թէ նաշանիկ՝ էլի  
ես եմ... ուրիշի թողալ չեմ... արուն կը հանեմ...

— Հանդարտուիր, յորդորեցի ես—արի, արի նստիր  
կողքիս. գուցէ էլի քեզ ընտրեն:

— Չեն ընտրիլ. շատ եմ ես դաղել դրանց... Այ,  
տենում ես, էդ աքլար Տաղին, էդ քիւրդի տղայ Տաղին,  
համ էլ էդ գորտ Քանազը... Իրանք են ուզում համ  
քեօխվա, համ ստարշինա...

Տեսայ որ խաղը պիտի խանգարուէր, դարձեալ մի-  
ջամտեցի, յորդորեցի և վերջ իվերջոյ համողեցի որ  
վերջին անգամն էլ Տելօն ստարշինա դառնար, Քանազը՝  
քեօխվա, իսկ Տաղին՝ գզիր:

Սակայն հազիւ համողել էի ամենքին և Տելօն  
յաղթական՝ ստամերն էր ցցում դէպի՝ աղջիկները—որ  
որանք ապստամբուեցին:

— Մենք չենք խաղում. ասաց Թագուշը—մենք կը  
գնանք:

— Ընչի՞, այ աղջի. ասաց Տելօն—որ մեծանամ,  
եանի քո ստարշինան ես չեմ ըլելու... Ամա, ջիաննամի  
գեռուը, որ չես խաղում... պաշօլ<sup>(1)</sup>, զնա:

— Ո՞ւ, հողեմ զլուխդ, զիժ Տելօ, չանչեց դէպի նա  
մի աղջիկ—դէլ ես, դէլ...

— Գել եմ, բաս... ծիծաղեց տղան—ստարշինան որ  
կայ, պտի գէլ ըլի... չես հաւանում ինձ, հրէն այ, շօ-  
սէն. պաշօ՛լ դու էլ...

— Կաց, բռնեցի ես նրա թկիցը—ուշունց մի տալ աղ-

1) Կորիկ:

Ջիկներին... Եկէք, աղջիկներ, մօտս նստէք, կս չեմ  
թողնիլ որ ձեզ նեղացնի:

Աղջիկներն անշնուշտ շատ էին ուզում խարին մաս-  
նակցել կամ գոնէ ներկայ լինել: Իսկոյն եկան մօտս և  
ուրախ՝ պաշտպանութեանս տակը մտան:

—Ըսչի, դարձաւ ինձ Տելօն քիչ վախեցած, որ իր  
իշխանութիւնը սահմանափակւում էր — մադամ<sup>2)</sup> դու  
նաշանիկ ես...

—Ո՞չ, կատակեցի ես — նաչալնիկից էլ մեծ. գուգեր-  
նա՛տօր<sup>3)</sup>)...

—Փի՛է... արեց Քանազը. — եանի նաչալնիկից էլ  
մեծը կայ:

—Կայ. գուգերնատօրը:

—Ըսդրանից մեծը:

—Լաւ, թողէք այդ. ասացի ես — ձեր խաղն սկսէք:  
Ես միայն կը նայեմ, ոչինչ չեմ լինի:

—Հա, էդ լաւ ա. արեց Տելօն միամտուած — բաս  
որ ըտէնց ա, ըստի մեծը խօ ես եմ...

Եետոյ մէկէն դարձաւ դէպի Տաղին ու կանչեց.

—Աղա Տաղի, մեր հրամանն ա, որ էս սհաթիս  
վեր կենաս ու վազես սարի էն կողի վրիցը ձէն տաս,  
հրէն այ, չիմանլրմը նստոտած Սրապին ու մէկ էլ  
տղերանցը... Թող շատ ըլեն, որ խաղը լազաթ տայ...  
ըտէնց չի, պ. երուանդ:

—Դէ էսքանս էլ հերիք ենք. առարկեց Տաղին — էլ  
ուր ես սաղ գեղը վմիկդ թափում:

Տելօն ամբողջ մաքմով շուռ եկաւ դէպի նա, աշ-  
քերը ոլորեց ու փայտը այնպէս սպառնալից բարձրաց-  
րեց, որ Տաղին վախիցը ետ ոստնեց:

—Ա, շան տղայ. գոռաց նրա վրայ Տելօն — դու  
ընչացու ես որ հրամաններիս ջուղաբ տաս. դու գզիր  
ես, թէ պրիստաւ.,. ուզում ես, էս սհաթիս կաշիդ քե-

2) Միթէ

3) Նահանգապետ:

Հոկտեմբեր, 1905.



թեմ..., ըստի քեզ գղեր են դրել, որ ստարշնի դէմը  
դողաս, հալուես...

—Ո՞ւ... արջն ա, խաչը, մէշի արջը... մոմոց  
աղջիկներից մէկը կծկուելով ու կանելով ընկերունուն:

—Են նվ ա որ ստարշնին արջ ա ասում. որոտաց  
Տելօն —կը չնչխեմ.,.

—Այդ չեղաւ. Տելօ. դարձեալ մէջ մտայ ես - շատ  
վատ սկսեցիր. որ այդքան դոռաս, էլ ձեն չի մնայ վրադ...  
Համ էլ աղջիկներին հանդիսատ թող:

Տելօն նայեց ինձ, ժապեց, յետոյ նորից գայլային  
դէմք ստանալով՝ քայլեց դէպի Տաղին ու կանչեց.

—Հլա կանգնել ես...

—Ո՞ւ ո՞ւ, ես քու... արեց Տաղին ու գնաց դէպի  
բլուրը:

—Որ շատ ըլենք, դորթ ա, լաւ կըլի. ասաց Քա-  
նազը—թող ես էլ գնամ կանչեմ..

Ապա ելաւ մի քարակրոյտի վրայ, դէմքը դարձրեց  
դէպի միւս նարալանջն ու սկսեց ձայնել խուլ, կարծես  
փորիցը դուրս եկող ձայնով.

—Է՛ է՛յ... էյ Սրապիօն, Սրապիօն, Սրապիօն է՛ է՛  
էյ... Գրիգոր, այ Գրիգոր, էյ Գրիգօճօճր...

Լեռնային կոչի այդ ձեզ, որ լաւ իւրացրել էր  
Քանազը, մօտից թէկ հնչեղ չէր, բայց այնքան յաջող  
ելէջներ (intonation) ունէր, որ գնալով աճում էր, ա-  
լիքների մղման նման զօրեղ ցնցումներ գոյացնում, թըր-  
թըրում էր օդի մէջ ու միմեանց բաղխելով՝ մեծանում  
էր հեռուներում:

Անշնուշտ լսեցին այստեղ. մանաւանդ որ Տաղին էլ  
մազլցել էր ամենաբարձր կէտի վրայ և ելնէջների ու-  
րիշ տեսակ կոչ էր իշեցնում դէպի սարալանջը: Այդ  
կոչն ևս իր ինքնատիպ ձեն ունէր: Սկսում էր խորին  
բամբով, խաղերը հատ հատ՝ մղում էին միմեանց, գո-  
գած մասում բաղխւում, կուտակւում և զօրեղ ալիքնե-  
րով համառմ նարատակակէտին:

Մինչ այդ, Տելօն թողել էր գահը, գլխարկի տա-

Կեց ինչ որ խոշոր դանակ էր հանել և նրանով մամուլի թվից կտրում էր բաւական խոշոր ճիւղ։

Զեռքերի ոյժն էր աւելի կտրողը։ Ոլորեց ու կեղեց պոկ տալով՝ յաջողուեց ունենալ դալար ճիպոտ։ Մաքրեց փշերից, կոշտերից, մի քանի անգամ նրանով օդը ծեծեց ու ասաց.

— Լաւ ա...»

— Ի՞նչ պիտի անես. հարցը ես։

— Ղամչի ա։ Ստարշինան առանց դամչու՝ ո՞նց որ էշը առանց փալանի..»

— Է՛յ, կանչեց մանուկներից մէկը—տես, որ պինդ ես խփել, կը դնքսենք քեզ համա... էլ հերիք ա. ընենց վրայ ես տալի, կասես դորթանց հէնց ստարշինա ըլես։ Տելօն բարկացած նրա կողմը դարձաւ։

— Աղա սանտկած Կարօ, ձայնեց նա—որ չխօսաս, չե՞ ըմիլ. չես ուզում խաղալ—հիմիկանց պոշօլ... հրէն է՞ պահն տղերք գան, որ սկի լայեղ էլ չեմ անի դամչիս ծէրը քեզ կպցնի...»

Ստուերն սկսում էր կարճանալ. ամենքս քիչ աւելի վեր քաշուեցինք ու տեղաւորուեցինք խոտերի մէջ։

Մանուկները կանգնել՝ սպասում էին միւսներին։ Տաղին ու Քանազը վերադառնում էին։

(Վերջը յաջորդ համարում)

Վ. Փափազեան